կին պալատը ևս տարաւ զմեզ, և ուրիշ ամէն տեղերը ցուցուց մեզի։ Ուզեցի նաև թէ Արգարու առ Ցէրն մեր և թէ Ցեսուն մերոյ առ Աբգար գրած թղթերը՝ զորս կարդաց մեզի սուրբ եպիսկոպոսը՝ առնուլ և օրինակել, ինչպէս որ կատարեցի։

ՀԻՆ ՔՆԱՐ

ՏԱՂ

Ի ՍՈՒՐԲ ԽԱՉՆ

Ահաւոր խորհուրդ ահեղ և 'ի սկզբան լինելութեան
Էր ծածկեալ Երրորդութեանդ 'ի զաւրութեանցն իմանալի։
Ցագին գրախտին յայտնեալ ծառըն կենաց և կենսատու,
Սրովբէիւք շրջապատեալ քրովբէական մետաքս եղեալ։
Դու երկնից գերագունակ և գաւազան քառաստեղեան՝
Գլորեցելոյ հաւր գաւազան ցուպ 'ի ձեռին հաստատութեան։
Գուշակեալ մարգարէիցըն գոյանայր 'ի Գողգոթա
Ի ծայրս ոստոց բերեալ պըտուղ ծիլ ծայր ունէր զունողն երկնից։
Նաւապետեալ նահապետացն 'ի համաջուրցըն հեղեղաց.
Ցարմարումըն տապանի դու և տապան իմանալի։
Զվէմն հարկանէր գաւազանաւն և ապառաժն ազբիւրանայր
Խորայելեան ազն յորդորէր 'ի զանազան հրաշս նորոգէր։
Եսայիաս դիմեալ ասէր 'ի յեղեմայ ելեալ փրկիչն,
Կարմրավառ աւար առեալ վառ 'ի վառեան հընձան կոխեալ։
Ցախտակ մատենագրի և տպագիսն քառատեսլեան
Ի յերիրէ բոյս բարուենակ քննողահրաշ անքննելի։
Ի լիբանան ծառ ծաղկեցաւ վարդափրթիթ սաղարթարեր,
Զէմանուէլն պըտղաբերեաց քաղցրաճաշակ ուրիթ կենաց։
Եւ 'ի բարձունս փրրկել զգերեալսն, աւար առնոյր 'ի թշնամւոյն,
Զանբաւելին ասեմ՝ ըշխաշն ընդ որ հիանամ և զարհուրիմ։
Զիաուս 'ի վեր առաքելով ամենասուրբ Երրորդութեանն,
Ան որ աւրհնեալն է յաւիտեան, արդ 'ի ներկայս և յապառնին։



digitised by A.R.A.R.@